ՔԱՂՎԱԾՔՆԵՐ

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

1959 Թ. ՀՈՒՆՎԱՐԻ 29-Ի ՆԻՍՏԻՑ

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ սույն նիստում լսվեց Մայր Աթոռի գլխավոր ճարտարապետ Արծրուն Գալիկյանի զեկուցումը 1959 թվականի ընթացքում Մայր Աթոռում և նրա հողամասից դուրս կատարվելիք շինարարական աշխատանքների մասին։

Գերագույն Հոգևոր Խորհուրդը, հետ քննության, հաստատեց 1959 թվականի համար նախատեսված շինարարական աշխատանքները և որոշում ընդունեց հանձնարարել շինարարական գրասենյակին և Մայր Աթոռի տնտեսական վարչության՝ ձեռք առնել անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու համար Մայր Աթոռի 1959 թվականի շինարարական ծրագրի կատարումը։

1959 Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 10-Ի ՆԻՍՏԻՑ

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴԸ սույն նիստում քննության առավ Ս. Էջմիածնի Մայր Տաճարի Ավագ Սեղանի մարմարե խաչկալի գեղարվեստական քանդակման ծախսերի հարցը։

Գերագույն Հոգևոր Խորհրդի որոշումով հանձնարարվեց Մայր Աթոռի գլխավոր ճարտարապետին՝ աշխատանքային պայմանագիր կնքել քանդակագործ Արա Հարությունյանի հետ և հետևել աշխատանքների գեղարվեստական կատարելության, Մայր Աթոռի ճարտարապետների հանձնաժողովի գործակցությամբ։

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴի սույն նիստում Մայր Աթոռի գլխավոր ճարտարապետ Ա. Գալիկյանը զեկուցեց Օշականի Ս. Մեսրոպ եկեղեցու նորոգման աշխատանքների մասին։

Օշականի Ս. Մեսրոպ եկեղեցու նորոգման աշխատանքները, որոնք սկսվել են 1958 թվականին, շարունակվելու են այս տարի, գարնան և ամռան ամիսներին։ Նախատեսված է սրբատաշ քարերով պարսպապատել եկեղեցու բակը և բարեկարգել և ընդարձակել Ս. Մեսրոպի դամբարանը։

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ սույն նիստում կազմվեց Վարդապետական քննիչ հանձնաժողով հետևյալ կազմով. գերաշնորհ Տ. Հայկազուն եպիսկոպոս Աբրահամյան՝ վերատեսուչ Հոգևոր Ճեմարանի, գերաշնորհ Տ. Եղնիկ եպիսկոպոս Ազնավուրյան՝ անդամ Գերագույն Հոգևոր Խորհրդի, պրոֆ. Առաքել Առաքելյան՝ անդամ Գերագույն Հոգևոր Խորհրդի, Արթուն Հատիտյան՝ խմբագիր «Էջմիածին» ամսագրի։

Վարդապետական քննիչ հանձնաժողովի պարտականությունն է քննել վարդապետական աստիճանների տվչության համար ներկայացված գրավոր աշխատանքները և զեկուցել Վեհափառ Հայրապետին։

1959 Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի ՆԻՍՏԻՑ

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ սույն նիստում լսվեց Մայր Աթոռի գլխավոր հաշվապահ Գ. Քեհյայանի զեկուցումը Մայր Աթոռի ներքին թեմերի 1958 թվականի բյուջեի կատարողականի և 1959 թվականի նախահաշվի հաստատման մասին։

Գերագույն Հոգևոր Խորհուրդը, հետ քննության, հաստատեց ներքին թեմերի 1958 թվականի բյուջեի կատարողականը և 1959 թվականի բյուջեի նախահաշիվը՝ ըստ թեմերի։